ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 39

«13» 05 2022 թ. Ք. Երևան

ԱԶԱՏ ՎԱՀԱՆԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ գլխավոր դատախազության դատախազ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Ազատ Վահանի Մարգարյանը ՀՀ դատախազության համակարգում որպես դատախազ աշխատել է 2012-2014 թվականներին՝ զբաղեցնելով Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազության դատախազի, Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության դատախազի և Երևան քաղաքի դատախազության դատախազի պաշտոնները: 2014 թվականի ապրիլի 14-ին իր դիմումի համաձայն ազատվել է զբաղեցրած պաշտոնից: Այնուհետև 2019 թվականի նոյեմբերի 18-ից կրկին նշանակվել է դատախազի պաշտոնում, նախ՝ մինչև 2020 թվականի հունիսի 3-ը՝ Տավուշի մարզի դատախազության դատախազի, որից հետո՝ մինչև 2020 թվականի սեպտեմբերի 1-ը՝ նույն մարզի դատախազի տեղակալի պաշտոնում: Ազատ Մարգարյանը ՀՀ գլխավոր դատախազության դատախազի պաշտոնում աշխատում է 2020 թվականի սեպտեմբերի 1-ից:

Ազատ Մարգարյանը ներկա պաշտոնում աշխատելու ընթացքում հսկողություն և դատավարական ղեկավարում է իրականացնում հասարակական մեծ հնչեղություն ունեցող, իրենց բնույթով առավել բարդ և բազմադրվագ հանցագործությունների վերաբերյալ հարուցված քրեական գործերով, ապահովում է այդ գործերով մեղադրանքի պաշտպանությունը դատարանում, բողոքարկում է անօրինական և չհիմնավորված դատավճիռներն ու որոշումները:

2020 թվականի սեպտեմբերի 1-ից մինչ օրս Ազատ Մարգարյանը հսկողություն է իրականացրել ՀՀ հատուկ քննչական ծառայության, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում և ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերով քննության վարչությունում քննվող և քննված թվով 7 քրեական գործերի մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ, որից 2 քրեական գործերով վարույթը կարճվել է, իսկ 3 քրեական գործերով նախաքննությունը շարունակվում է: Հսկողություն իրականացրած քրեական գործերով տրվել է 2 գրավոր ցուցում, 1 քրեական գործով կայացվել է քննիչին քրեական դատավարությանը մասնակցելուց հեռացնելու մասին որոշում:

Ազատ Մարգարյանը առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում 6 քրեական գործով պաշտպանում է մեղադրանք: Ընթացք է տվել 57 բողոքի և դիմումի, որոնցից 42-ով կայացված որոշումները դատավարության մասնակիցների կողմից բողոքարկվել են դատարաններ:

Ազատ Մարգարյանը տիրապետում է ծանր և առանձնապես ծանր, բազմադրվագ հանցագործությունների քննության, քննչական գործողությունների կատարման, մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ դատախազական հսկողության, մեղադրանքի պաշտպանության մեթոդիկային և մարտավարությանը: Տիրապետում է բնագավառը կարգավորող օրենսդրությանը: Օժտված է կազմակերպչական և ղեկավարման անհրաժեշտ ընդունակություններով, պարբերաբար ուսումնասիրում է օրենսդրությունն ու մասնագիտական գրականությունը, պարտաճանաչ է և կարգապահ, վայելում է աշխատանքային կոլեկտիվի հարգանքը:

ՀՀ դատախազության համակարգում աշխատելու ժամանակահատվածում Ազատ Մարգարյանը 2020 թվականին ՀՀ գլխավոր դատախազի հրամանով պարգևատրվել է «Իրավակարգի ամրապնդման համար» մեդալով: 2021 թվականին ՀՀ գլխավոր դատախազի հրամանով շնորհվել է արտահերթ դասային աստիճան: Ազատ Մարգարյանը կարգապահական տույժեր չունի:

Հիմք ընդունելով վերոգրյալը, Ազատ Մարգարյանի անձնական և մասնագիտական բարձր որակները, ղեկավարվելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, 37-րդ հոդվածով, 39-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 2-րդ մասի 2-րդ կետով և 4-րդ մասով, 50-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Անցկացնել ՀՀ գլխավոր դատախազության դատախազ Ազատ Մարգարյանի արտահերթ ատեստավորում՝ վերջինիս «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված ծառայողական առաջխաղացման ցուցակում ընդգրկելու նպատակով:

Ա. ԴԱՎԹՅԱՆ